

Վահագն Տատրյան, Թաներ Աքչամ, «Դատավճիռ Ստամբուլում: Հայոց
ցեղասպանության Առնչուող դատավարությունները», Նյու Յորք և Օքսֆորդ, 2011. 363
էջ:

ISBN 978-0-85745-251-1 (կոշտ կազմ), ISBN 978-0-85745-286-3 (էլեկտրոնային)
Համառոտ ակնարկ

Գիրքը նվիրված է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայոց
ցեղասպանության ուսումնասիրությանը՝ ըստ այդ գործում ընդգրկված
հանցագործների դեմ Օսմանյան հատուկ ռազմական դատարանի քրեական
վարույթի փաստաթղթերի: Հետպատերազմյան շրջանում Օսմանյան հատուկ
Ռազմական դատարանի նպատակը այդ ոճրագործության կազմակերպիչների
բացահայտումն ու պատժումն էր: Ինչպես դատարանը բացահայտեց մոտ երեք
տարիների ընթացքում (1919-1922), ցեղասպանության կազմակերպման գործում
ռազմականացած մի քաղաքական կուսակցության մի քանի առաջնորդների՝ Երիտ
Թուրքերի խունտայի խաղացած գրեթե ամենագոր դերը իրենց կառավարական
ենթակաների հետ միասին, դարձավ միանգամայն ակնյայտ: Այդ կուսակցության
անունն էր «Իթթիհադ վե թերաքքի» կամ «Միասնություն և Առաջընթաց»:

Ուսումնասիրությունը գրեթե ամբողջապես խարսխված է բնօրինակների և
վավերացված պաշտօնական փաստաթղթերի վրա: Փաստաթղթերում ընդգրկված
վկայությունը բացարձակապես սովորական վկայություն չէ, այլ այնպիսինն է, որ
իրավականորեն բնութագրվում է որպես հիմնավոր ապացույց:

Ամենից կարևորն այն է, որ դատավարությունների փաստաթղթերը որակվել են
որպես անվիճելի և ստուգելի՝ ռազմական դատարանի կողմից ընդունված հատուկ
իրավական ընթացակարգի միջոցով. գլխավոր մեղադրյալները վկայի
կարգավիճակով հրավիրվել էին քննուելու և հաստատելու բազմաթիվ գաղտնի և
հույժ գաղտնի փաստաթղթերի վավերականությունը, որոնք կրում էին իրենց
ստորագրությունները: Այս փաստաթղթերից շատերն ապահովվել և վավերացվել էին
մինչ դատավարական նախաքննության շրջանում Ներքին Գործերի և
Արդարադատության նախարարությունների պաշտոնյաների կողմից: Օգտագործված
վավերականացման բանաձևը հետևյալն էր. «Համապատասխանում է բնօրինակին:»

Գիրքն իրենից ներկայացնում է նորույթներ /նախընթացներ/ մի քանի առումներով.

1. Առաջին անգամն է, որ դատական վարույթների ամբողջական հայտնի
փաստաթղթերը ներկայացվում են անգլերենով: Ուսումնասիրությունը
հիմնված է թուրքական բնօրինակների վրա, որոնք Օսմանյան
կառավարությունը ստիպված էր տրամադրել դատավարությունների
ընթացքում: Դրանք ներառում են Օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների

անձնական, ականատեսների վկայություններ, որոնք տրված են երդման տակ՝ հայերի դեմ կիրսորկված հանցագործությունների հսկայական ծավալների մասին: Մեղադրական եզրակացությունները, վկայությունները և դատավճիռները հստակորեն ապացուցում են նոյնահպատակ հայ քաղաքացիների նկատմամբ ցեղասպանություն իրագործելու Երիտթուրքերի կառավարության կենտրոնացված ծրագրումը և դիտավորությունը:

2. Առաջին անգամն է, որ դատավարությունների վերանգնման նպատակով օգտագործվել են այդ ժամանակաշրջանի օսմանյան թերթերը, որոնց հավաքման, թվայնացման, խմբագրման, տառադարձման և թարգմանության գործը հովանավորվել է Ջորջյան ինստիտուտի կողմից՝ «Գիտելիքի համընդհանուր կենտրոնի ստեղծում» երկարաժամկետ ծրագրի պարունակում: Մինչ պաշտոնական կառավարական գրառումները նշում են միայն տասներկու դատավարություններ, օսմանյան թերթերը մանրամասներ է ներկայացնում վաթսուներեքի մասին: 2001-ից 2004 թվականների ընթացքում, մի քանի հետազոտողներ շրջել են Թուրքիայի տարբեր քաղաքների գրադարաններում՝ 1919-ից 1921 թվականներին գործող Օսմանյան տասնյոթ թերթերում դատավարությունների վերաբերյալ հոդվածները գտնելու և թվայնացնելու նպատակով: Անչափ կարևոր էր ծրագրի դիտավորության մասին պաշտոնյաներին չհայտնելը, քանի որ մուտքը արխիվներ և գրադարաններ կարող էր սահմանափակվել կամ արգելվել: Արդյունքում, Ջորջյանն այժմ ունի դատավարությունների մասին Օսմանյան թերթերում տպագրված հարյուրավոր հոդվածների գրեթե ամբողջական հավաքածուն: Այս հոդվածները թարգմանվել են ժամանակակակից թուրքերենի, իսկ հոդվածների վերնագրերը թարգմանվել են նաև անգլերեն: Այս թերթերի թվային պատկերները պահպանվում են Ջորջյանի արխիվներում:
3. Առաջին անգամն է, որ ազգային դատարանը հաջողությամբ քննել է սեփական քաղաքացիների նկատմամբ զանգվածային բարբարոսության այսպիսի դեպք: «Մարդկության դեմ հանցագործությունների» իրավական սկզբունքը, որ ձևավորվեց այս դատաքննության ընթացքում, հեռահար ազդեցություններ է ունեցել և տեղ է գտել Նյուրնբերգի կանոնակարգում, Տոկիոյի կանոնակարգում, ինչպես նաև ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայում:
4. Սա հայոց ցեղասպանության երկու միջազգայնորեն ամենահայտնի գիտնականների՝ ազգությամբ հայ Վահագն Տատրյանի և ազգությամբ թուրք Թաներ Աքչամի առաջին միացյալ հրատարակությունն է:

Պատերազմական շրջանի նախարարների դահլիճը, Երիտթրքական կուսակցության ղեկավարները, ինչպես նաև շատ ուրիշներ ենթարկվել էին դատաքննության՝ ռազմական դատարանի կողմից Առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիայի մասնակցությունն ապահովելու և հայերի բնաջնջումն իրագործելու համար: Շատերին առաջադրվել էին մեղադրանքներ և համապատասխան պատճառաբանություններ՝ ծանր պայմաններով աշխատանքային գաղութներում բանտարկությունից մինչև մահապատիժ: Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազիմը հեռակա կարգով դատապարտվել էին մահվան:

1921թ.-ի հունվարի 13-ին հատուկ ռազմական դատարաններն ամբողջությամբ լուծարվեցին՝ իրենց լիազորությունները զիջելով սովորական ռազմական դատարաններին: Մինչ կենթարկվեին դատական պատասխանատվության՝ Միասնություն և Առաջընթաց կուսակցության գրեթե բոլոր անդամները փախուստի ճամբով հաջողությամբ լքել էին Թուրքիան: Կուսակցության մի շարք այլ առաջնորդներ հեռակա կարգով դատապարտվեցին մահվան կամ ազատազրկման: Այնուամենայնիվ, սրանցից շատերը խուսափեցին պատասխանատվությունից կամ ազատ արձակվեցին, քանի որ Դաշնակից ուժերը չափազանց դանդաղ էին դատավարությունների իրագործման հարցում, մշտապես քարկոծում էին միմյանց, և ի վերջո դուրս բերեցին իրենց ուժերը Թուրքիայից՝ միաժամանակ ազատ արձակելով տանյակ հազարավոր ռազմագերիների, ովքեր պատրաստակամորեն միացան քեմալական ապստամբությանը: 1923թ.-ի հուլիսի 24-ի Լոզանի պայմանագիրը թուրքերի շատ յամառ պնդումներու հետեւանքով ձևակերպվել էր այնպես, որպեսզի խուսափեր պատերազմի հանցագործությունների և ջարդերի թեմայի քննարկումից: Համաներման մասին VIII հայտարարությամբ և պայմանագրին կից արձանագրությամբ, և քանի որ քեմալիզմն ստացել էր առաջնային նշանակություն և վերջ էր տվել Օսմանյան Կայսրությանը, հայերի համար արդարադատության հետապնդումն ավարտվեց:

Ինչպես նշվել է իրավաբան Ռաֆայել Լեմկինի կողմից, ով առաջինն է շրջանաառության մեջ դրել «ցեղասպանություն» եզրը, հայերի ցեղասպանությունն իրենից ներկայացնում է ցեղասպանության պատմական առաջին դեպքը, երբ կառավարությունը փորձել է վերացնել իր իսկ քաղաքացիներ հանդիսացող էթնիկապես և կրոնականորեն ճանաչելի մարդկանց մի խումբ, և որը հանդիսանում է մի շարք գիտնականների կողմից այսօր որպես «արդի ցեղասպանություն» ճանաչված երևույթի նախատիպը: Սա այն դեպքի դասական օրինակն է, թե ինչպես մի հանցանքի անպատիժ մնալը կարող է հանգեցնել նոր հանցանքի, ինչպես Ադոլֆ Հիտլերն հայտնի կերպով արդարացնում էր իր ծրագիրը՝ 1939թ.-ին հարցնելով իր զենեթալներին, թե «Ո՞վ է այսօր հիշում հայերի ջարդը»:

«Դատավարությունը Ստամբուլում: Հայոց ցեղասպանության դատավարությունները» գիրքը նոր հեռանկար է առաջարկում ցեղասպանության պատմական ու բարոյական ուսումնասիրությունների շուրջ և ներկայացնում է քրեական դեպքի մը իրաւական ուսումնասիրությունը: Այն կարևորագույն նշանակություն ունի այսօր՝ հաշվի առնելով ժամանակակից միջազգային հետաքրքրությունը ցեղասպանության և հատկապէս հայոց ցեղասպանության և դրա ժխտման հարցերի շուրջ:

Գրքի ուրվագծին ծանոթանալու համար տես Բովանդակությունը ստորև:

Հեղինակների մասին

Վահագն Տատրյանի մասնագիտացման բնագավառը ցեղասպանությունն է ընդհանրապէս և հայոց ցեղասպանությունը մասնավորապէս: Մի քանի տարներ նա ղեկավարել է ցեղասպանության ուսումնասիրության մի մեծ ծրագիր, որը հովանավորվում էր Հ. Գ. Գուգնհայմ ֆոնդի կողմից: Ծրագրի առաջին հիմնական ձեռքբերումը մի ընդգրկուն հատորի տպագրությունն էր, այժմ հինգերորդ ընդլայնված հրատարակությամբ, որ վերնագրված է «Հայոց ցեղասպանության պատմությունը. Էթնիկ հակամարտությունը Բալկաններից մինչև Անատոլիա և Կովկաս» (Օքսֆորդ և Փրովիդենս, Ռիչմոնդ, 1995): Այս աշխատանքը հրատարակվել է ֆրանսերէնով (Փարիզ, երկրորդ տպագրությունը) և հունարէնով (Աթէնք) ինչպէս և Թուրքերէնով, սպաներէնով, իտալերէնով և հայերէնով: Պրոֆեսոր Տատրյանի մեկ այլ կարևոր աշխատանքն է «Գերմանիայի պատասխանատվությունը հայոց ցեղասպանության հարցում. Գերմանիայի մասնակցության պատմական վկայության ակնարկ» գիրքը, որ տպագրվել է 1996-ին (Քեմբրիջ, Մասաչուսեթս) և այժմ երրորդ հրատարակության մեջ է: Նրա երրորդ գիրքը՝ «Ցեղասպանության երաշխիքը. Հայ-թուրքական հակամարտության կարևորագույն տարրերը», լույս է տեսել 1999-ին (Լոնդոն և Նյու Բնարսուիք, Նյու Ջերսի): Հեղինակի վերջին գիրքը վերնագրված է «Հայոց Ցեղասպանության թուրքական մերժման կարևորագույն տարրերը» (Քեմբրիջ, Մասաչուսեթս, և Տորոնտո, 1999): Այս գիրքը թարգմանվել է իսպաներէն Բուենոս Այրեսում (2002): Բացի նշված մենագրություններից, Տատրյանը տպագրել է մի շարք հոդվածներ աշխարհի տարբեր գիտական ամսագրերում: Հրատարակությունների իր ընդարձակ շարքը ներառում է մի քանի հոդվածներ հրեական ողջակիզման և ամերիկյան հնդկացիների հետապնդումների մասին: 2005թ.-ին հեղինակն արժանացել է չորս տարբեր մրցանակների՝ ցեղասպանության

ուսումնասիրություններում ունեցած ներդրումների համար: Ներկայումս պրոֆեսոր Տատրյանը Զորյան Ինստիտուտի Ցեղասպանության հետազոտությունների տնօրենն է:

Թաներ Աքչամը ծնվել է Թուրքիայի հյուսիս-արևելքում տեղակայված Արդահանի շրջանում, և վաղ հասակից հետաքրքրվել է թուրքական քաղաքականությամբ: Որպես քաղաքական ամսագրի գլխավոր խմբագիր 1976-ին ձերբակալվել և դատապարտվել է տաս տարվա ազատազրկման: Մեկ տարի անց, փախնելով բանտից, հայտնվել է Գերմանիայում որպես քաղաքական փախստական: Աքչամը հրատարակել է հետևյալ գրքերը. «Երկխոսությունը միջազգային բաժանարար գծի երկայնքով. Ակնարկներ թուրք-հայկական երկխոսության մասին» (2001), «Կայսրությունից դեպի հանրապետություն. Թուրքական ազգայնակությունը և հայոց ցեղասպանությունը» (2004): «Ամոթալի արարք. Հայոց ցեղասպանությունը և թուրքական պատասխանատվություն» մենագրությունը լույս է տեսել 2006թ.-ի նոյեմբերին և թարգմանվել է հոլանդերեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն և իսպաներեն: Նա առաջին ազգությամբ թուրք գիտնականն է, որ ուշադրության է դարձրել հայոց ցեղասպանության պատմականության վրա և որի համար ենթարկվել է թուրքական պետության հալածանքներին: 2006թ.-ի ապրիլին Մասաչուսեթսի նահանգային կառավարության կողմից պարգևատրվել է ակնանավոր մրցանակով՝ մարդու իրավունքներին և ցեղասպանության ժխտման դեմ պայքարին նվիրված իր կարկառուն աշխատանքի համար: Ներկայումս Քլարք համալսարանի պատմության պրոֆեսոր է և միաժամանակ ղեկավարում է Ողջակիզման և ցեղասպանության ուսումնասիրությունների կենտրոնի Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների Գալուստյան/Մուզար ամբիոնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օսմաներեն-թրքերեն բառեր և անուններ xi

Ներածություն 1

Վահագն Տատրյան և Թաներ Աքչամ

ՄԱՍ I. Դատավարությունների պայմանները

Գլուխ 1. Թուրք-հայկական հակամարտության պատմությունը 13

Վահագն Տատրյան

Գլուխ 2. Ռազմական պարտությունը և հաղթողների՝ պատժիչ արդարադատությանն մղումը 19

Վահագն Տատրյան

Գլուխ 3. Հատուկ ռազմական դատարանների նախապատրաստությունները 78

Վահագն Տատրյան

Գլուխ 4. Հատուկ ռազմական դատարանների ձևավորումը 93

Վահագն Տատրյան

Գլուխ 5. Զարգացող քեմալիզմը և հատուկ ռազմական դատարանները 101

Վահագն Տատրյան

Գլուխ 6. Հիմնական դատավարությունների շարքը և առնչվող դատավճիռները.

«Տեղահանության», «քաղաքացիական պատերազմի» և «միջհամայնքային բախումների» փաստարկների կեղծարարությունը 108

Վահագն Տատրյան

Գլուխ 7. Իրավական վարույթները որպես հայեցակարգային պարունակ 126

Վահագն Տատրյան

Գլուխ 8. Դատավարությունների շուրջ առկա պայմանների ամփոփում 154

Վահագն Տատրյան

Գլուխ 9. Որոշ գլխավոր հանցագործների դատական լուծարումը Միասնություն և Առաջընթացի և՛ քեմալիստ իշխանությունների կողմից, և այլ մեղսակիցների փնտրման ավարտը 177

Վահագն Տատրյան

ՄԱՍ II. Դատավարություններէ անդին

Գլուխ 10. Ստանբուլի ռազմական դատարանի կողմից սահմանված մահապատիժները 195

Թաներ Աքչամ

Գլուխ 11. Դատավարությունների լուսաբանումը Ստամբուլի թուրքական մամուլում 200

Թաներ Աքչամ

Գլուխ 12. Օսմանական ռազմական դատարանների ձևավորումն ու գործառնությունը 251

Թաներ Աքչամ

Գլուխ 13. Մեղադրական եզրակացությունների և դատավճիռների ամբողջական տեքստերը անգլերենով 271

Թաներ Աքչամ

Հավելված 333

Եզրերի բառարան 335

Արխիվային, դատական և խորհրդարանական փաստաթղթեր 337

I. Օսմանյան կայսրությունը և Թուրքական հանրապետությունը 337

II. Կայսրական Գերմանիան և գերմանական պաշտոնական գրառումները 342

III. Կայսրական Ավստրո-Հունգարիան 344

IV. Մեծ Բրիտանիան 345

V. Ամերիկայի Միացյալ Նահանգները 346

VI. Միացյալ Ազգերի Կազմակերպությունը 346

VII. Ֆրանսիան և ֆրանսիական արխիվները 346

VIII. Հայկական արխիվային փաստաթղթերը 346

Երկրորդային աղբյուրների գրականության ցանկ 348

Գրքեր 348

Թուրքերեն 348

Անգլերեն 350

Գերմաներեն 351

Ֆրանսերեն 351

Հայերեն 351

Հողվածներ 352

Թուրքերեն 352

Անգլերեն 352

Գերմաներեն 353

Հայերեն 353

Թերթեր 354

Թուրքական 354

Ֆրանսիական 354

Ամերիկյան 354

Բրիտանական 355

Կանադական 355

Ավստրալական 355

Հայկական 355

Ինդիքս Ցուցակ 356